



ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԷջՄԻԱԾՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԹԻԼԻԱՍՈՒՄԻ

4. ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ՀԱՅՐԵՆԻՔ

Յենք որոշել էինք թեյրութից թոշել «Պանամերիկյան» ընկերության սավառնակով հունիսի 20-ին և նախապես պատվիրել էինք տոմսերը, սակայն պարզվեց, որ այդ ընկերության բանվորներն ու ծառայողները գործադուկ են հայտարարել և սավառնակը չվացուցակով նշանակված օրը չպիտի թոշի: Հարկադրված եղանք մեր թոփչքը հետաձգել չորս օրով ևս և տոմսեր պատվեր տալ Սկանդինավյան ընկերության օդային գծի վարչությանը այն հաշվով, որ թոշենք հունիսի 24-ին Հոռոմ-Թրագա օդային գծով: Այդ շատ էր ուրախացրել առանձնապես պրոֆեսոր ընկերոջն, որն անշափ ցանկանում էր տեսնել Հոռոմի հնությունները: Իրավն ասած, ես, ինչպես և մեզ հետ եկող երուսաղեմի միաբանները, նույնպես քիչ ցանկություն չունեինք տեսնելու Հոռոմը:

Թոփչքի օրը, լուսար դեռ չբացված, Անթիլիասի միաբանությունը, Հոռոմը Ճեմարանի ուսանողությունը և ծառայողները ոտքի վրա էին: Անթիլիասում մեր գտնված ժամանակ մեր մեջ ստեղծվել էր մտերմական սերտ փոխարարերություն, և նրանք իրենց բարոյական պարտքն էին համարում անպայման ճանապարհ դնել մեզ: Սակայն ճանապարհ դնողները միայն նրանք չէին. վաղ առավոտից, թեյրութից, խմբերով Ան-

թիլիաս սկսեցին ժամանել բազմաթիվ հայրեր, որոնք նույնպես ցանկանում էին ուղեկցել մեզ մինչև թեյրութի օդանավակայանը:

Մեկնելուց առաջ, բոլոր ճանապարհորդներս, Անթիլիասի միաբանության հետ միասին, գնացինք տաճար և աղոթեցինք: Տաճարի բակում հավաքվել ու մեզ էին սպասում Հոռոմը Ճեմարանի ուսանողությունը, վանքի ծառայողները և թեյրութից մեզ ճանապարհ դնել ցանկացող բազմաթիվ հավատացյալները: Նրանք բոլորը հուզված էին:

Մենք մնաս բարով ասացինք մեզ ճանապարհ գնող բազմությանը և ինքնաշարժերով ճանապարհվեցինք դեպի օդանավակայան: Անթիլիասի միաբանությունից մեզ ուղեկցում էին Խորեն սրբազնը և Գնել հայր սուրբը: Ճանապարհին մեզ միացան հայ հավատացյալների այլևայլ խմբեր՝ իրենց ինքնաշարժերով և մոտոցիկլետներով, այնպես, որ մինչև օդանավակայան հասնելը մեզ հետեւում էր ինքնաշարժերի մի երկար կառաջարք:

Մեզ ուղեկցող այդ հավատացյալներից քևերին էինք մենք ճանաշում իրենց անուններով, — մեծ մասամբ անծանոթ դեմքեր էին, — բայց մենք հայելու պարզությամբ տեսնում էինք այդ անծանոթ մարդկանց հոգին, նրանց սիրութ: Ի՞նչն էր ստիպել նրանց թողնելու իրենց աշխատանքը, խանդարելու իրենց հանգիստը՝ մեծարելու համար պաշտոնական հանգամանք չունեցող և լոկ հիվանդութեան եկած Մայր Աթոռի երկու պատգամավորներիս: Մի՞թե այդ բոլորը իմ կամ ընկերոջս՝ պրոֆեսորի բարեմասնու-

1. Սկիզբը ամսագրի 1951 թվի հունիս-օգոստոս և սեպտեմբեր-հոկտեմբեր համարներում:

Թյունների հետ էր կապված, Ամենակին ոչ, նրանք մեր մեջ իրենց նվիրական Հայրենիքն էին տեսնում, իրենց սրբազն էջմիածինը: Մի փոքրիկ փաստ բավական է պատկերացնելու Սփյուռքի մեր հայության վառ հայրենասիրությունը. Անթիլիասում մեր գտնը-ված ժամանակ մեղ ալցի եկած մի հայ արհեստավոր ձեռքք բայց պրոֆեսորի վերարկրվի թեկին և համբուրեց ասելով՝ թե «Հայրենիքի փոշի կա նրա վրա»: Միանգամայն ճշմարիտ է տարածված այն կարծիքը, որ արտասահմանում գտնված ամեն մի հայրենասեր հայ մարդու սրտում երկու պատկեր կա քանդակված — մեկը Հայրենիքի պատկերն է, մյուսը՝ Ս. Էջմիածնի:

Անթիլիասից մինչև օդանավակայան մեր ճանապարհորդությունը տեսեց մոտ մեկ ժամ: Մենք գնում էինք սովորականից ավելի դանդաղ: Մեր ուղեկիցները, հակառակ մեր կամքի, ցանկանում էին մեր ճանապարհորդությանն առանձին հանդիսավորություն տալ, երբ հասանք օդանավակայան, պարզվեց, որ այդտեղ ևս մեղ ճանապարհ դնելու համար բավականին սպասողներ կային: Նրանք բոլորը հավաքվեցին դահլիճ, մեր շուրջը: Եկել էին մեղ ճանապարհ դնելու իրանանի հայ հասարակության մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչները, թեյրութի հայկական առաջադիմական թերթերի և ամսագրերի խմբագրությունների պատասխանատու աշխատակիցները, հայ երիտասարդական, մարմնամարզական միությունների ներկայացուցիչները և ուրիշները:

Շատ ժանր և սրտաշարժ էին մեր բաժանման րոպեները: Բոլորը լուս էին, բոլորը թախծուու: Նրանց լուս հայացքի մեջ միայն մի հարցում կար. ե՞րբ է լինելու այն երջանիկ օրը, որ մենք ևս ձեղ նման ճանապարհվենք գեպի Հայրենիք, ե՞րբ է մարմնանալու մեր տարիների երազանքը...

Պետք էր պատասխանել նրանց լուս հարցումին, պետք էր միսիթարական մի քանի խոսք ասել: Խոսեցի ես և միսիթարեցի նրանց, խոսեց նաև պրոֆեսորը նույն ոդով:

Մի քանի բոպե հետո լսվեց սավառնակի մոռուի հոնդյունը. մեղ հրավիրեցին սավառնակ: Հասարակությունը ուղիւ կանգնեց և բարի ճանապարհ մաղթեց մեզ: Շատերն արտասվում էին, նրանք մեղ ուղեկցեցին մինչև օդանավակայանի արգելման սահմանագիծը: Կերցին մարդք, որի ճակատը ես համբուրեցի — դա Գնել հայր սուրբն էր. նրա աշքերից արցունքի շիթեր էին կախված: Մինչև այժմ աշքիս առաջն է Գնել հայր սուրբը՝ արցունքու աշքերով: Ներս մտանք սավառնակ և գրավեցինք

մեր տեղերը: Սավառնակն օդ բարձրացավ: Հսասամուտից երկում էր մեղ ճանապարհ դնողների թաշկինակների ծածանումը: Մեր բոպե ևս և մեր սավառնակը հետացավ օդանավակայանից և ուղղություն վերցրեց դեպի հյուսիս-արևմուտք՝ կտրելով Միջերկրական ծովի կապույտ ջերը՝ դեպի Հունաստան, գետի Աթենք:

Չնայած բաժանման թողած ժանր տպավորությանը, մեր տրամադրությունը ընդհանրապես լավ էր: Հայր Եղիշեն, հայր Սուրենը և հայր Նորայրը առաջին անգամ պիտի տեսնեին հայրենի երկիրը, նրանք համակված էին այդ ուրախությամբ: Ես և պրոֆեսորը երկամսյա պանդխառությունից հետո վերաբանում էինք տոն, դրանով էինք ուրախությամբ: Սավառնակում բոլորս խոսում, ծիծառում էինք, բացի Նորայր հայր սուրբից, ուրը աշքերը փակ, կարծես անզգա, նստած էր իր տեղում, սարսափելի զիսապտույտ ուներու:

Ժամը մոտ 12-ին հասանք Աթենք և մեր սավառնակը վայրէջք կատարեց օդանավակայանում:

Աթենքում մենք շատ քիչ մնացինք. Հնարավոր չեղավ ո՛չ քաղաքք տեսնել և ո՛չ հնությունները: Ես և պրոֆեսորը ցանկացանք օդանավակայանում գնել այնպիսի մի հիշատակ, որ բնորոշ լիներ հունական արվեստին: Մեր ցանկացած իրերը գտանք օդանավակայանի փոքրիկ կրպակում, ուր վաճառվում էին վազաներ, զարդանկարված պնակներ, փուստ-քարտաներ և այլն:

Աթենքում փոքր ինչ հանգստանալուց հետո, նույն օրը շարունակեցինք մեր թոփշը և ժամը 3-ին հասանք Հռոմ: Օդանավակայանում մենք պահ մվինք ճամբրուկները և ինքնաշարժով գնացինք քաղաք. կանգ առանք կենտրոնական հյուրանոցներից մեկում:

Որոշել էինք Հռոմում մնալ մոտ մեկ շաբթ, տեսնել քաղաքը, թանգարանները, սրբավայրերը, նկարասրահները և բոլոր կարերը հիշարժան վայրերը: Նորայր հայր սուրբի օգնությամբ, որը մեկ անգամ արդեն եղել էր Հռոմում և փոքրիշատե ժանոթ էր քաղաքի հետ, կազմեցինք մեր պտույտի ծրագիրը՝ գաղտեցնելով թե՛ ցերեկային և թե՛ երեկոյան ժամերը: Եվ հաջորդ օրվանից սկսեցինք գործի անցնել:

Մեղ համար այժմ դժվար է մանրամասնութամբ պատմել մեր տպավորությունները հնագիտական այն բոլոր վայրերի և արվեստի այն բոլոր նմուշների մասին, որնք տեսանք Հռոմում: Մենք ցանկանում ենք կանգ առնել միայն կարևորներից մի քանի սի վրա:




Նախքան առանձին հուշարձանների և թանգարանների մասին խոսելը, երկու խոսքով ասենք մեր ընդհանուր տպավորությունը Հռոմի մասին:

Պետք է խոստովանվել, որ մենք, մեր պտույտի հենց սկզբից, գտնվում էինք որոշ հիմնաժամկետ մեջ: Գրականության հիման վրա Հռոմի մասին տարիների ընթացքում մեր պատկերացման մեջ ստեղծված կուրքերը բախվելով ռեալ իրականությանը,

մում ներդրվել է ոչ միայն իտալացի աշխատավոր մարդու արյուն-քրտինքը, այլև նրա գաղութների, հնագույն շրջանում նաև՝ հայ ժողովրդի, բայց ո՞ւր է այս բոլորի ակնբախ արդյունքը:

Հռոմում մեր այցելած առաջին սրբավայրը, — այդ Սուրբ Պետրոսի (Սան Պետրի) տաճարն էր, որը գտնվում է Վատիկանի «պետության» սահմանների մեջ, Պապի ոեղիկենցիալի անմիշական կողքին: Տաճարը



Հռոմի Ամֆիթատրոնը

սկսում էին փշրվել, մենք ավելին էինք սպասում տեսնել, քան այդ իրականությունն էր:

Հռոմը — կիսաեկեղեցական քաղաք է: Այնտեղ անշափ շատ է հոգևորականությունը. բնակչության, կարելի է ասել, չորսից մեկը հոգևորական է: Ամեն մի քայլափոխում գուք հանդիպում եք քահանայի, վարդապետի, կուսի, հոգևոր դպրոցի ուսանողի և եկեղեցական այլ պաշտոնյայի՝ սև, կապույտ, մանիշակագույն ու մուգ կարմրի հագուստներով և բազմաձև լայն պիլանոցներով: Քաղաքում շատ էին օտարականները, առանձնապես ամերիկացիները:

Քաղաքում քիչ կան արդյունաբերական ձեռնարկներ և մոնումենտալ խոշոր շենքեր: Մարդ նույնիսկ զարմանում է. Հռոմեացիները դարեր շարունակ ունեցել են իրենց պետականությունը, անվերջ շինել են, Հռո-

մորը հնություն ունի, նա հիմնվել է Կոստանդին կայսեր կողմից, իսկ հետագա դարերում մի քանի անգամ վերակառուցվել է և ընդարձակվել: Վերջին անգամ վերաշինվել է 15-րդ դարում՝ տասնյակ միլիոնների ծախսով:

Ս. Պետրոսի տաճարը աշխարհում խոշորագույն քրիստոնեական տաճարներից մեկն է: Ամբողջ տաճարը ուշադիր դիտելու համար ժամեր են պետք: Տաճարում կան արվեստի բացարիկ նմուշներ՝ հարյուրավոր արձաններ, անշափ արժեքավոր նկարներ, վաղ քրիստոնեական շրջանին պատկանող իրեր և այլն, բայց այս բոլորը խեղդված է: Նոր շրջանում պատրաստված ուկյա և արծաթյա անարթեստ իրերի ժանրության տակ, որոնք անշափ շատ են: Ընդհանրապես, տաճարն ավելի թողնում է ոսկերչության և արձանագործության շտեմարանի, քան սըր-

բավարի տնկավորություն։ Գրեթե ամեն մի սեղանի մոտ, ամեն մի անկյունում, Հիսուսի կամ Աստվածածնի արձանի կողքին, դրված է այս կամ այն պապի արձանը, երբեմն ավելի խոշոր, քան Հիսուսի արձանն է։ Պապերի արձանները մեծ մասամբ պատրաստված են հրեշտակների հետ, ինքնարավ դեմքով գահի վրա նստած, հրամայողի խոժոռ դեմքով։ Զգում ես՝ որ մեր հայկական եկեղեցիները, իրենց պարզության մեջ,

այլ ուկու և թանկագին քարերի արժեքը՝ որպես հարստություն։

Հետագայում մենք տեսանք Ս. Պողոսի բազիկ եկեղեցին, Ս. Հովհաննեսի տաճարը, Ս. Մարիամ Աստվածածնի տաճարը և ուրիշները, որոնք իրենց ներքին ձևավորմամբ բիշ են տարրերվում Ս. Պետրոսի տաճարից։ Հովհայում մեր այցելած երկրորդ կարևոր վայրը Վատիկանի թանգարանն էր, Կյան և կոնվում է Վատիկանի քաղաքամասի սահ-



Հովհայ Ֆորումը

իրենց համեստ արդուկարդով, ավելի հարազատ են նախնական քրիստոնեական ոգուն, քան կաթոլիկ այս տաճարներն իրենց ոսկու փայլով։

Ս. Պետրոսի տաճարին կից գտնվում է նրա գանձատունը։ Այցելուներին բաց են թողնում տոմսակներով. տաճարի ներսում դրված է դրամարկղը, մուծում ենք տոմսի դիմում գանձատուն։ Այս ևս վատ տպավորություն է թողնում հավատացյալ այցելուի վրա։

Գանձատունը քիչ է տարբերվում բուն տաճարից. այնտեղ ևս խառնիխուռն դրված են տարբեր արժեքի և տարբեր հնությամբ էքսպոնատներ (ցուցանմուշներ), ծուցադրվող իրերի դասավորման ընդհանուր անդեմնցն է՝ ցուց տալ ոչ թե քրիստոնեական հնություններ որպես այդպիսիք,

մաններում, պապի պալատի ճիշտ կողքին։ Վատիկանի թանգարանն աշխարհի խոշորագույն թանգարաններից մեկն է, նա ունի հարյուրավոր բաժիններ, որոնք անհնար է մի օրում պատել։ Ուստի և որոշեցինք մի «գիր», այսինքն՝ բացատրող վարձել և պայմանավորվել նրա հետ, որ նա մեզ ցուց տա միայն կարենը էքսպոնատները։

Թանգարանում բավկականին ժողովուրդ կար, մեծ մասամբ կաթոլիկ հոգևորականներ, որոնք ավելի հետաքրքրվում էին մեղնով, քան թանգարանով։ Մենք, շորս հայ հոգևորականներ, մեր տարազով, մեր վեղարներով, բոլորի հետաքրքրության առարկան էինք։ Երբ մտնում էինք որևէ բաժին, իւկույն այցելուները շրջապատում էին մեջ և հետաքրքրվում թե որտեղից ենք մենք, ինչ դավանանք ունենք և այն։

Վատիկանի թանգարանը երեք հիմնական մասի կարելի է բաժանել՝ հունա-հռոմեական հեթանոս աշխարհ, միջին դարեր և վերածննդյան շրջան։ Բոլոր բաժիններու էլ հարուստ են մարդկային կուլտորայի նմուշներով՝ արձաններով, նկարներով, ձեռագրերով, հնագիտական իրերով և այլն։ Կանգ առնել թեկուզ նրանցից կարևորների վրա, իհարկե մենք ներկա փոքրիկ հողվածում, ի վիճակի շնոր, բացի այդ, նրանց

մությանը։ Այս, պետք է ասել, բայցահայտ աղավաղումն է պատմական իրողության։

Ավելի քան հինգ ժամ մենք եղանք վատիկանի թանգարանում և նայեցինք բաժինները առանց հանգստանալու։ Կերպում միայն, Ռաֆայելի նկարի դահլիճում, փոքր ինչ հանգստացանք և ապա դուրս եկանք թանգարանից։

Հոգմում մեր տեսած հնություններից ծանր տպավորություն թողեց կապուցինների



Հոռմի Պանթեոնը

մեծ մասը վաղուց գիտության սեփականությունն է հանդիսանում։ Մենք ցանկանում ենք միայն նշել թանգարանի նյութերի խճողվածությունը։ Մենք, օրինակ, եղել ենք Մուկվայի թանգարաններում, Լինինգրադի «Էրմիտաժ»ում։ Էքսպոնատները և այս թանգարաններում այնպես են դասավորված, այնպիսի կապակցության մեջ, որ թանգարանը նայելուց հետո, երբ դուքս են գալիս, ամբողջական որոշ պատկերացում ունենում ես։ Բայց այդ նույնը չի կարելի ասել վատիկանի թանգարանի մասին։

Վատիկանի թանգարանը ունի մի այլ խոշոր թերություն ևս. Վաղ քրիստոնեական շրջանի նյութերն այստեղ դասավորված են նեղ կաթոլիկ ոգով, ամենեախն տեղ յի տրված վաղ քրիստոնեական եկեղեցիների, առանձնապես արևելյան հին եկեղեցիների պատ-

ստորերկրյա վանք-գերեզմանատունը։ Երբ մենք ներս մտանք այդ վանքը և իշանք նրա ներքնահարկը, մեր առջև բացվեց մի զարդութելի տեսարան։ Կողք-կողքի գտնվող մոայլ խցիկների պատերը և առաստաղն ամբողջապես զարդարված էին տաճանյակ հաւարավոր մարդկանց ոսկորներով։ Բայտ որում, գանգերից զարդախւրաններ էին պատրաստված, ազդուսկրներից և թիոսկրներից՝ մանրանկարչական զարդանկարներ և այլն... օգտագործվել էին նույնիսկ մարդկանց մատների ոսկորները, որոնցից պատրաստված էին գերիալներ և ցանցի պես կախված պատերից։ Ամեն մի խորանում դրված էին կմախքի ամբողջական մանիկեններ՝ վրան շուրջառ ձգված և ձեռքին դրված սաղմու։ Այս խցիկներում օդն անշափ ծանր էր, դեռ կալին ոսկորներ, որոնց վրայի միւր շարունակվում էր քայլքայվել։ Աշխատե-

ցինք շտապ թողնել կապուցինների այս գերեզմանատունը, առանց հասկանալու նրա ստեղծման նպատակը. ինչի՞ համար է ցուցադրվում մարդկանդ ուսկըների այս շեղջը, ինչի՞ համար են ծաղրում մարդու աճյունը՝

բություն էր թողել մեղ մրա, ուստի և մենք ցանկանում էինք տեսնել նաև նրա «Մովսես»ի արձանը, որի մասին շատ ենք կարդացել:

Մեծ դժվարությամբ մենք գտանք այս



Միհել Անջելոյի Մովսեսը

ոսկըները որպես զարդարանք օգտագործելով:

Մեղ շատ էր հետաքրքրում Միհել Անջելոյի «Մովսես»ի արձանը: Ս. Պետրոսի տաճարում մենք տեսել էինք նրա սպավոր Աստվածածնի արձանը՝ Հիսուսին գրկած (իսակափայտից իշեցնելուց հետո): Մեծ արվեստագետի այդ արձանը ուժեղ տպավո-

տաճարը, ուր գտնվում էր մեր փնտռածը: Արձանը հիացմունք պատճառեց մեղ բոլորին. իրապես այդ մարդկային արվեստի հրաշալիքներից մեկն է: Կարելի էր լիապես արդարացնել նրան գտնելու մեր փնտռութիւնը:

Հին հոռմեական շենքերից մենք տեսանք պանթեոնը, ճարտարապետական իր կա-

ոռոցվածքով և հնությամբ բացառիկ հուշարձան է այն: Կառուցվել է Ագրիպայի երեք կոնսուլատների ժամանակ և նվիրվել աստվածներին: Հետագայում պանթեոնը վերակառուցվել է Անտոնիոս Պիոս, Սեպտիմոս Սևերոս և Կարակալյա կայսրների ժամանակ:

Խիստ ուշագրավ էր Կոլիզեի՝ ամֆիթատրոնի շենքը, որը հիմնել է Վեսպասիանոսը (69—70 թ. թ.) և ավարտել նրա որդին՝ Տիտոսը մեր էրայի 80 թվին: Կոլիզեին այժմ կիսաքանդ վլճակում է, բայց նրա ավերակներն այնուամենայնիվ, որոշ պատկերացում տալիս են այցելուին նրա մասին: Այս վիթխարի մի կառուցվածք է, 40—50 հազար հանդիսականներ տեղավորվող մի շենք՝ իր բոլոր հարմարություններով: Կանգուն է դեռևս կայսերական օթյակը, գլադիատորների և գազանների դուռը, մրցությունների ձվածե հրապարակը և այլ մասեր: Նայում ես ամֆիթատրոնին և մտածում, որքան անմեղ մարդկանց արյուն է խափվել այս քարերի վրա, սոսկումի ինչ պատմություններ ունի այս լուս շենքը:

Կոլիզեից ոյ այնքան հեռու գտնվում է Փորումը — հին Հռոմի քաղաքական և առևտրական կենտրոնը: Դա մի բնդարձակ հրապարակ է՝ շրջապատից փոքր ինչ ցածր մակերեսով: Այնտեղ ցաքուցրիվ թափված են Հռոմեական քանդված քաղաքի ավերակները: Ամեն քայլափոխում հանդիպում են

կորնթական սյուների, բարելեֆների, ջարդված արձանների և հնության այլ մնացորդների: Դեռևս կանգուն են մնացել Սատուրինի տաճարի ութ սյուները, Վեսպասիանոսի տաճարի երեք սյուները, Տիտոսի և Սեպտիմոս Սևերոսի հաղթական կամարները և այլ հուշարձաններ:

Հոռմում մենք մնացինք ավելի քիչ օրեր, քան ծրագրել էինք, որովեհտեւ սկանդինավյան ընկերության սավառնակը Պրագա էր թոշում շաբաթը մեկ անգամ, 28-ին նրա հերթական թոփշքի օրն էր և եթե մենք այդ սավառնակը բաց թողնեինք, հարկադրված պիտի լինեինք մեկ շաբաթ ևս սպասել, որը ցանկալի չէր, ուստի և որոշեցինք ճանապարհվել առաջին սավառնակով:

Մինչ այդ մենք պտտեցինք և տեսանք Հռոմի մի քանի վայրեր ևս, եղանք արվեստի թանգարանում, ուր հավաքված էին հին և նոր շրջանի արվեստի լավագույն նմուշները, գետնահարկ կատակոմբաներում, ուր ապաստանել են քրիստոնյաները առաջիներկրորդ դարերում հռոմեական իշխանության հետապնդումներից և այլ վայրերում:

Ամսուլս 28-ին վաղ առավոտյան Հոռմից մենք թռանք Վիեննա, իսկ այնտեղից, նույն օրը Պրագա:

Պրագայում մնացինք մի քանի օր: Այնտեղից շարունակելով մեր ճանապարհը Մոսկվայի վրայով՝ հովհանք 4-ին ժամանեցինք Հայրենիք, մեր սիրելի Երևան, այնտեղից՝ էջմիածին:

